



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Մարտ 13, 1990

Արժանաշնորհ
Տ. Կարապետ Քննչ. Քոչարեան
Հովի Ա. Մեսրոպ Եկեղեցույ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ռէչսիմ.

Սիրելի Տէր Հայր,

Ստացուած է Առաջնորդ Սրբազան Հօր ուղղուած Մարտ 1, 1990 թուակիր ձեռնամարկ:

Այս նամակով կը տեղեկացնէք թէ Փետրուար 18-ին, 1990, տեղի ունեցած է համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը, եւ այդ առթիւ ընտրուած են նաեւ Ծխական Խորհուրդի երեք անդամները: Կու տաք բուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացումը:

Այս գրութեամբ կը փափաքիմ տեղեկացնել որ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի ճեւեռեալ անդամներու ընտրութիւնը՝

Սարգիս Կարապետեան
Յակոբ Ղազարեան
Միւռն Չորտիզեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ ճեւեռաձայնի թիւերը:

Ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթեմ առողջութիւն եւ ձեր բոլորին եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն:

Աղօթակից

Խաժակ Վրդ. Պարսամեան
Առաջնորդի Փոխանորդ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Թի 380
Մարտ 19, 1991

Արժանաշնորհ
Տ. Կարապետ Բնկ. Բոչաքեան
Հովի Ա. Մեսրոպ Եկեղեցոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ռէյսին.

Սիրելի Տէր Կարապետ,

Ստացուած են համայնքի Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 1, 1991 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքի Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 17, 1991-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի չորս անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Դանիէլ Եղիա Բոչաքեան
Քայի Ղազար Ղազարեան
Հուրիկ Չորէքեան
Մուրատ Ծէնկոզեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնուի որ Ծխական Ժողովին ներկայացուած Ծխական Խորհուրդի տեղեկագիրը պէտք է ստորագրուի Հովիին, Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ:

Կը շնորհատրեմ Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթեմ որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքի անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Աղօթակից

Հայկազուն Ծ. Վրդ. Նանարեան
Առաջնորդի Փոխանորդ

File



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

Թի 836
Ապրիլ 1, 1992

Արժանաշնորհ
Տ. Կարապետ Քհնյ. Քոչարեան
Հովի Ա. Մեսրոպ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ռէյսին.

Սիրելի Տէր Կարապետ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 1, 1992 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած էՓետրուար 9, 1992-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին երեք անդամներ: Կու տաք բուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Կէրի Վիտեան
Միքայէլ Գաբրէլեան
Մարկրիթ Արմականեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ